

կարդի հոյակասպ շենքերէն մէկը , որուն  
մէջի եղած ուսումնական վարժարանը  
պատճառ է այնքան ընկերական բարե-  
րարութեանց , և թէ ասանկ փառաւոր  
յաջողութենէն արժանապէս վարձատրե-

ցան մեծապատիւ Հարց աշխատանքը և  
բազմահոգ խնամքը , և 'ի մասնաւորի մե-  
ծարգոյ ձարեան չ . Աքրահամ վարդա-  
պետինը , որ իմաստուն խոհականութեամբ  
կը հսկէ վարժարանին վարչութեան :



Գուշակելով որ անշուշտ բարեսէր ընթերցողաց հետաքրքրութիւնը պիտի շար-  
ժի լսելու գերպ . Եղուարդայ սրտաբուխ և եռանդուն տաղերգութիւնն ալ , ա-  
հաւասիկ կը հրատարակենք զայն ևս :

Տաղերգութենէն ետքը անմիջապէս կը դնենք նոյն Ռափ . Վարժարանին երի-  
ցաղոյն աշակերտացմէ մէկուն պղտի հայերէն բանախօսութիւնն ալ՝ 'ի խրախոյս  
և 'ի քաջալեր անձին : Նմանապէս ուրիշ նորեկ կրտսերագումի մը պանդխո-  
րէն համառօտագիծ ճանապարհորդութիւնը :

## Ա.Ռ ՍԻՐԱ.ՍՈՒՆ ՍԱՆՍ

### ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՅԱԿՈՒԹ ՆՈՑԻՆ ՄՐՑԱՆԱԿԻ

#### ԵՐԳ

ՈՐ ՅՈՂՆԱԽԱՆ ի վաստակ  
ի փորձ վարժից եւ ուսմանց  
Հանդիսացայք նահատակը  
Մի քան ըղմի դերազանց .  
Մանկութիւն եւ ըզգօն ,  
Զեզ զայսոսիկ ի խրախոյս  
Ընծայեմ տողս՝ որ ինչ օն  
Աղդեն ի յիս իղձ եւ յոյս :  
Քանիցս ի ձեղ ակնարկեմ ,  
Ճահք ինձ թըւիք բոցավառ ,  
Ճառագայթել ի նըսեմ  
Լոյս հայրենեացդ ի խաւար :  
Թըւիք ծաղկունք ինձ ի բոյր ,  
Ծաւալել քաղցր ըղճոտ ձեր  
Ընդ Հայաստան համասփիւռ  
Գեր Ծաղկէոյ քան ըզբւեր :  
Գերաշխարհիկ դուք թըւնիկը ,  
Որոց կը օնք ըզմի թեւ ,  
Եւ զմիւսըն վարժք գեղեցիկը  
Կազմեն ի թոփշս թեթեւ :

Ոչ այնպէս նայք գեր ի վեր  
Թեւակոխեն ընդ երկին ,  
Որպիսիք դուք անվեհեր  
Թոռցեալք յիմաստ գերարփին :  
Ոչ այնպիսի մարդարիտ  
Պըճնաղարդէ զշար ոսկեակ ,  
Եւ ոչ գոհարք խիտ ընդ խիտ  
Ընդելուղեալ ի մանեակ ,  
Ոչ ըզկուսի մեհեւանդ  
Այնպէս զըմբուխտ եւ յակինթ ,  
Կամ լուսափայլ անդամանդ  
Զոսկեղենիկ նորին գինդ ,  
Որպէս կրօնից ըզձեղ սէր  
Ցեռեալ ընդ իղձս իմաստից ,  
Եւ ընդ ներհուն միտըս ձեր  
Գեղազարեալ վարք ամրիծ :  
Պատանեկանդ ի ծնօտի  
Այն ինչ բուսեալ մօրուաց տէդ ,  
Ո՞հ ընդ ալիս ծերունի  
Զի վայելու գան ի վէդ .

Զի զծերութիւն պատուական  
Հոգեհանճարն իմաստուն  
Ոչ ի հասակ բազմամեան  
Եւ ոչ յալիս եդ ծերոյն,  
Այլ ի կենցաղ անարատ.  
Իրը աստ ի ձեղ ահա զնոյն  
Լրցեալ շնորհիւն երկնառատ՝  
Դիտեմ մանկտի սիրասուն:  
Օրհնից ըզձեօք իջե ցող.  
Բարձրեալըն ձեղ ապաւէն.  
Մի մերձեսցի գաղտագող  
Անդընդայինն ի ձեղ հէն:

40 Սեպտ. 1865:

Կեցջիք ձերոցըդ ծնողաց,  
Կեցջիք եւ մեղ յամերամ,  
Բոլորեցունց հայրենեաց  
Կեցջիք մանկտի մանրերամ:  
Եւ զ՞ր ապա յաւելից  
Վերատեսչիդ օրհնութիւն,  
Եւ ոյց նմին աջակից  
Գործեն խնամով ի ձեղ գուն:  
Տայէ նոցա տացէ Տէր  
Ուրախանալ մինչ ի սպառ  
Ընդ բարեբախտ նըսեհ ձեր,  
Խնամոց իւրեանց կէտ եւ ծայր:

Մեծ է, և կարի մեծ շնորհ տեսչութեան երկնից առ մեզ, և առ իս մանաւնդ, զոր յափանց Պոնտոսի ՚ի խաւարէ տգիտութեան փոխարերեաց յարեւուտս՝ յելս լուսոյ իմաստութեան՝ ընդ խնամօք իմաստուն Դաստիարակաց և անձնանուէր Հարց: Ի վերայ շնորհիս մեծի և այլ շնորհ մեծ, զի համարձակիմ կալ այսօր առաջի Մեծապատիւ որդեգորով Հօր և Պետիդ խնամակալուաց, և առարինաժողով մարդասէր և ազգասէր գումարիս: Եւ զի ժամ՝ բարեպատեհ առ ՚ի վերհանել զիզձս և զսէր սրտիցս առ այնչափ սրտեռունդն Բարերարսդ. այլ խիթամ զի մի զյաճախ յեղյեղեալսն յերիցագունից իմոց Եղբարց վերստին կրկնեալ՝ ձանձրոյթ զձեօք արկանիցեմ:

Այլ զի մի ՚ի սպառ լուռ եղէց, տացի ինձ զուսմանց ինչ որ առաջի կանս մեզ ձառել. զիրաւագիտութենէ ասեմ, ոչ հանրապէս, զի անսահման իմն է սա, այլ զՄեփական ևեթ Ատացութենէ (Proprietà), որ գառաջին տեղին ունի ՚ի Քաղաքական Շնտեսութեան և յիրաւագիտութեան, զորոց այն ինչ առաք զճաշակ:

Կրկին կարեօր պայմանքս հիմունք են բազարային ընկերութեան, Աեփական Ատացուածք և իշխանութիւն Հօր ՚ի վերայ ամուսնոյ և որդւոց և ընտանեաց՝ զորս Գերդաստան կոչեմք: Յերկաքանչիւրոց աստի իրը յազրերականց բղիսեն կարես-

րագոյն հանգամանք բարեբաստութեան մարգոյ. և ամենայն վաեմագոյն առարինութիւնք՝ ընտանեկանք և քաղաքականք՝ Սեփհականութեան արդիւնք են և Գերդաստանի: Ի վերայ սոցա կանգուն կայ մարդկութիւն զլխովին, որ այնքան առաւել զարգանայ ՚ի քաղաքականութեան՝ որքան յօրէնսգրութեան և ՚ի ներքին համոզման մարգոյս արգոյ ընծայիցին սկըզբունքս այսորիկ մեծամեծք:

Ակայն չեն զարմանք զի և պատուականագոյնք և սրբագոյնք ՚ի սկզբանց հաշածանս կրիցեն յերեսաց տգիտութեան և չարութեան. չեն զարմանք զի ընդ տարակուսանօք անկցին, կամ յայտնապէս իսկ խոցուիցին ապահովագոյնք անգամ և ակներե ճշմարտութիւնք: Արդարե զնոյն անցս տեսանեմք անցեալ ընդ Սեփհականութիւն ընչից և ընդ բնածին իրաւունս Գերդաստանի: Ի հեթանոսական ժամանակաց և այսր հակառակորդք ոչ սակաւ կացին այսոցիկ, որք թէպէտ բազում անգամ կորակորեալ և ՚ի հասարակաց մըտաց գտան դատավարտեալք, սակայն և այնպէս յաճախ վերընձիւղեալ ամբարձին զգլուխս ևս քան զես սպառնալիցք: Հակառակորդքս այսորիկ, որոց բազմագիմի են ազանդք, բազում և դրութիւնք այլօրինակք ամենեին յարգի քաղաքականութեան օրինաց, Ընկերականք կամ (Ընկերասէրք անուանին) (Socialisti): Ես սոցա և այլ իմն ազգ, որ զառաջին իւր

նպատակ՝ ՚ի հաւասարութեան գիտէ ընչից և՝ ՚ի լուծանել զարբաղանն զօդ ամուսնական, և սոքա Հասարակասէրք կոչին (Comunisti)։ Երկոքին աղանդք այսոքիկ ժանտք՝ վեր՝ ՚ի վայր գզրդեցին երբեմն զԳաղղիա և յուղեալ տագնապեցին զԵւրոպա ողջոյն։ Այլ յաւուրս մեր թողեալ զԳերդաստան յիւրում աղատութեան, զամենայն ատելութիւն ընդգէմ Անփականութեան ստացուածոց ժողովեն, յանդգնագոյնս ջանեղեալ բնաջինջ առնել զայն ՚ի մատենից օրինաց, ստգիւտ գողութեան և յափշտակութեան շփելով զնովաւ, և կամելով իմն կամ ընդ հաւասարութեան ընչից փոխանակել զայն, կամ գոնեայ առն իւրաքանչիւր տալ հաւասար իրաւունս ՚ի վերայ ամենայնի։ Ապաքէն Saint-Simon, Owen, Charles Fourier, Cabet և Louis Blanc զանազան դրութեամբ ածեն զմեզ ՚ի նոյն պայման հանգամանաց՝ զորս ՚ի վեր անդք յիշեցաք. իսկ որ առաւել յանդգնագոյնս պատկեր և կերպարան տայ իւրոց ամպարիշտ կարծեաց՝ նա ինքն է Proudhon, որ դատապարտեալ հալածէ զԱնփականութիւն, գողոնս կոչելով զայն և յափշտակութիւն։ Զոր օրինակ ամպրոսք զփոթորիկս գուման մեզ, այսպէս և գրութիւնք Ընկերականաց և Հասարակասիրաց զմօտալուտ սպառնալիս յեղափոխութեանց։ Այլ առ ՚ի հաստատուն ունել զհանդարտութիւն համատարած ՚ի քաղաքաժողով ընկերութեան, աղնուագոյն և մեծ մասն քաղաքացւոց՝ որ յօրինէ զընդհանուր մարմին ընկերութեան՝ զատապարտէ զդրութիւնս իբր ցնորս, կամ մանաւանդ իբր եղեւնագործ դաւադրութիւնս։

Գիտութիւնք երկու մեծամեծք՝ մաքառին յաղթանակաւ ընդ Հասարակասէրս. իրաւունք և քաղաքական Ցնտեսութիւն։ Երկոքին սոքա ուժգին և ակնյայտնի փաստիք դիմեն ՚ի մեծ անդք նպատակ՝ հարկանել վանել զպատիք ձեռնարկս նոցաւ հոլանել զճշմարտութիւն։ Իբր արակեաք կրկին որ ընդ հանդիպակաց պողոտայս ՚ի նոյն ածիցեն տեղի. Երկոքին ևս ակներև քարոզեն, զի Անփականութիւն ոչ միայն օրինաւոր է՝ այլ և կարեսու։

Անմանեալ է մարդոյ զի ընդ կրօնական և ընդ բարոյական օրինաց ճանապարհ հասցէ յիւր վախճան. և զի իցէ նմանապատակ և պայման ՚ի վերայ երկրի, որ ՚ի պահպանութիւն և ՚ի կատարելութիւն նորին հայիցի։ Առ ՚ի ձեռնհաս այսմ լինելոյ պէտք են նման հնարք հայթայթելոյ զկարիս իւր իբր էակ բնական և իբր էակ բարոյական։ Հայթայթանքդ այդու

քիկ բովանդակին յիրս արտաքինս։ Ապա իրաւունս ունի մարդ վայելելոյ ՚ի նոսա, զի անհրաժեշտ իմն է ՚ի լրումն երկրաւոր իւրոյ նպատակին. այն որ ստորակարգեալ կայ մեծագունին, եղելոյ նման յԱրարչէն Եւ զի պէտք մարդոյ տեսականք են զամենայն աւուրս իւր, այսինքն մըշտրնջենաւորք, ապա և վայելք պարտին լինել մշտատեք։ Արդ են ինչ ինչ յարտաքնոց իրաց ՚ի պէտս և ՚ի սպաս մարդոյ անսպառելիք, որ անպայման ՚ի քանակութեան, ամենեցուն առձեռն պատրաստ, և ամենեցուն կարեն մատուցանել սպասծառայութեան։ Յայսպիսեաց սակի են լոյս և օդ, յորս ամենայն ոք վայելէ ըստ հաճոյս առանց ումեք մեղանչելոյ. սակայն են և իրք այլազգ ՚ի բնութենէ սահմանեալ. քանակ նոցին ՚ի պայմանի է և ՚ի չափու, և որ միանգամ վարինոքօք՝ հարկ է զի զայլս ՚ի բաց անտի մերժեսցէ։ Իրացս այսոցիկ սպառելի տամբ անուն. հարկ իսկ է զի այսպիսեացս վայելք յաւերժականք՝ աղատ իցեն ստացողին և բացարձակ։ Աւադիկ առանձին սեպհականութիւն։

Յառաջ վարեալ զցուցմունս իւր իրաւութիւն հաւաստէ, զի մարդ ՚ի բնէ յանձին բերէ զիրաւունս առ սեպհական կարողութիւնս իւր և առ արդիւնս նոցին։ Զօրութիւնամբ իրաւանցս ինքեան անկ են արգասիք իմացականութեան և հանձարոյ, աղատ կամացն և կարողութեան գործելոյ, այն է շարժիչ զօրութեան։ Իբրք յորս վարէ մարդ զվերջինս զայս կարողութիւն՝ առնուն կնիք առանձին և ուրոյն մարդոյ։ Կթէ ՚ի հաճել զպէտս իւր մարդ զիարդ և իցէ օրինակաւ զիւր շարժիչ զօրութիւն ՚ի կիր առնուցու ՚ի վերայ ինչ իւրիք, որ ՚ի սպաս սպառելի կարգեալ իցէ, կամ այլով օրինակաւ ասացեալ եթէ ոք գրաւիցէ ինչ որ տակաւին չիցէ ընդ ձեռամբ անկեալ ուրուք, այնպիսին հայթայթէ ինքեան զիանխասացեալ մշտատե և զբացարձակ վայելս, այս է Անփականութիւն. զի իրն այն առնու զիւր կնիք անձնաւորութեան, և եղանի արդիւնք կարողութեան գործելոյ իւրոյ։

Ապա իրաւունք Անփականութեան ընչից ՚ի պայման սպառելի է օրինապէս արդարացեալ առ ՚ի հարկէն հաճելոյ զպէտս՝ որ պահանջեն սպաս մշտնջենաւոր և աղատ ՚ի բնական հանգամանաց, որով ՚ի կիր արկանել նորա զշարժիչ զօրութիւն ՚ի վերայ իրիք (որ է գրաւումն), տայ նմին զկնիք անձնաւորութեան գրաւողին. և զի այսպէս ասասցուք, առնէ յաւելուած իմն

անձին նորա : Ի ցուցմունս փաստիցս այսոցիկ իրաւագիտութիւնն ոչ ձեռնթափ լինի 'ի զօրաւոր տրամաբանական հետեւանաց . ակիզին առնու 'ի բնութենէ մարդոյս և 'ի բնութենէ եղականացս , 'ի գերագոյն վախճանէն յոր կարգեալէ մարդ , և անտի յոր հասանել ունի 'ի վերայ երկի :

Ի վերայ ամրապինդ հիմանցս այսոցիկ անշարժ հաստատեալէ կառոյց շինուածոյս առ 'ի մերժել զամենայն ընդդէմ առարկեալ փաստ :

Ծնտեսութիւն քաղաքական ըստ օրինի փորձառական գիտութեան և ըստ ճշգրիտ պաշտաման նորին 'ի խոյզ և 'ի խնդիր արկանէ զգործս քաղաքագումար ընկերութեան , և 'ի բնութենէ անտի իրաց 'ի վեր հանէ յաղթողական հերքմունս զսկըդրանց և զդրութեանց ընկերասիրաց : Ամբաստանութեանցն , զորս առնեն ընկերականք ընդդէմ Աեփհականութեան , զողութիւն և յափշտակութիւն կոչելով զայն , և տոյժս և զրկումն որոց լիցին տեարք ստացուածոց , պատասխանէ քաղաքական Ծնտեսութիւն՝ ցուցանելով թէ չեն անդ ստուերքի իսկ գողոնից և յափշտակութեան , և նշաւակէ անհիմն զդատախազութիւն նոցա : Յափշտակութեան պարտ էր տեղի ունել կամ 'ի տոյժ ժամանակակցաց յառաջագոյն ստացողաց , կամ 'ի վեսա առ յապա եկելոց : Քաղաքական Ծնտեսութիւն ցուցանէ զի երկիր ամուլ և անմըշակ (որպէս էրն յորժամ անկաւ ընդ իշխանութեամբ առաջին զրաւողաց ) հաղիւ մարթէր հայթայթել զպէտս մարդոյ , և զի քառակուսւոյ փարսախի միոյ տարածութեան երկրի պէտք էին առ 'ի սնուցանել զմի որ միայն : Գրաւումն եկեալ 'ի վերայ և ընդ նմին մշակութիւն , զտարածութիւն վայրի՝ որ յանտերունչ հաւասարութեան սնուցանէր զմի միայն մարդ , կացոյց բաւական 'ի սնունդ բաղմութեան մարդկան և բազմաթիւ ընտանեաց : Յուռթի և բեղնաւոր մշակութիւն քառակուսի փարսախի միոյ երկրի շատ է 'ի հայթայթել զմնունդ հազար և երկերիւր անձանց՝ փոխանակ միոյն : Անտեղի է ապա և ծաղրական աղարտել զայս օրինակ բարերարութիւն կեղտ անուամբ յափշտակութեան և գողութեան : Եթէ նա , որում սիտոյ էր փարսախ մի քառակուսի անվարուցան երկրի , զրաւելով զայն գիտիցէ քաղել անտի զպարէն և այլոց բազմաթունից : Հարկ է առ ապա ասել թէ զրաւական սնութիւն և սեփականութեան որ անտի ունին ծագումն կարի յոյժ օգտամատոյց

իցեն ժամանակակից մարդկան նախնի զրաւողաց :

Գալով արդ 'ի յետին սերունդս , և ոչ առ սոսա իմանալի է գործդ յափշտակութիւն և գողութիւն : Զի զինչ յափշտակեալ 'ի սոցանէ կամ գողացեալ գտանի . ապաքէն և ոչ ինչ : Երկիր յարօրոյ և 'ի վաստակոյ թափուր , թափուր է և յարժէից . աշխատութիւն 'ի վար արկեալ՝ տայ նմա զարդիւնս արժէից : Հայեաց ընդ Աիտացեալ Նահանգս Ամերիկայ՝ ուր վայրք անտերունչք մոտադիւր ընծային տարագրելոցն 'ի հայրենեաց իւրեանց , այնու զի պակասեն յարժէից : Եւ արժէք հողոյ կցորդ աշխատութեան և եթէ զրաւողացն : Ապա կարծեցեալն այն առանձնաշնորհութիւն տեարց ստացուածոց չիր 'ի միջի . քանզի ոչ մի ինչ յարժէից բառնան նոքա յայլոց , այլ տիրանան միայն այնոցիկ՝ զորս ինքեանք և կամ նախորդք իւրեանց 'ի քիրտն երեսաց ածին 'ի կերպարան :

Անպայման օգտակարութիւն զրաւականութեան և Աեփհականութեան ակն յայտնի երեկի , եթէ խելամտել կամենսցուք . զի թէպէտ սակաւ և սահմանաւոր է թիւ ըստացողաց երկրի , կտմ որոց հողագործութեան պարապիցին , սակայն ամենայն մարդիկ անդամք ընկերութեան կարի յոյժ մեծապէս օգտին նորօք , որպէս զի թուել իմն ամենեցուն ստացիչս երկրի և տեարս : Եւ արդիւնք իրացս 'ի ձեռն փոխանակութեան 'ի վեր երեկին : Քանզի ստացողն պարտի այլում թողուլ ապա զաւելին արդասեաց իւրոյ անդաստանին , զի փոխանակաւ հայթայթիցէ զայլ ինչ արդիւնս այլօրինակ ճարտարութեան : Յորմէ զիեւտ գայ զի ամենայն արուեստաւորք , թէ և շիցեն տեարք կալուածոց , 'ի լնուլ զպէտս անձանց 'ի նմին պայմանի կալուածատեարց գտանին : Արդիւնքս այսոքիկ տրնտեսականք՝ պարզ և մեկն ցուցեալք 'ի գիտութենէս՝ զարմանալիք են : Աեծահըռչակ քաղաքավարն Գալլիացի , հեղինակ Քաղաքական Կերպաշնակութեան , հերքիչ կարծեաց Proudhonի , պայծառ և վճիր լուսով բանին յանդիման կացուցանէ զիրացս ճշմարտութիւն : Եթէ իցէ , ասէ , որ ընդդէմ կրիցէ ընկերական կարգաց և Աեփհականութեան երկրի , տարջիք զայնալիսին յանմարդակոյս ուրեք անտառի , կամ 'ի մօրուտ մահահոտ : Անդանօր նա 'ի բաց դիցէ զկագ և զկուի հետամտութեան , և յանձնասիրութենէ փարթամաց և յարունութենէ կալուածատեարց հրաժարեսցէ : Այսպիսի էր կերպարան երկրի զրաւելոց յառաջնոց անտի մշակաց . նոքա զայն հար-

կեցան ցամաքեցուցանել, ակօսաբեկ առնել և պարարել, և քաղէան զգաղձն և զմոլախոտ ՚ի սերմանց և ՚ի ծառոց առնել՝ թող զնոյն գործիցէ և ինքն, և տէր կացցէ արգասեաց ամենայնի : Եթէ ընկալցի այրդ զայս պայման, անշուշտ ոչ բաւիցէ յարդիւնս բերել և զիտր մի ցորենոյ՝ զերկամ մի վաստակեալ, ուր Սեփհականութեամբ երկրի (հայլածելոյ յերեսաց ընկերականաց) և տրուպն անզամ ՚ի գործաւորաց զնոյն չափ իւրովք վաստակօք ՚ի կրկին եօթնեակս հայթայթէ : Ապաքէն մարդ յարդիւնս ածէ զծեռագործս երկաթոյ, զասր, զբամբակ, այլովքն հանդերձ, և փոխանակէ զայնս ընդ արծաթոյ և զարծաթ ընդ ցորենոյ . և այդ գործի ըստ բնական օրինի . զի օգտակարութիւն ձրի անցանէ ձեռաց ՚ի ձեռս, և արժէք և եթ վաճառին, այն է ճգունք գործատեառնն : Զհետ գայ աստի զի (եղեալ միանգամ Սեփհականութեան) գործաւորն կարօտ՝ փոխանակէ զարգասիս հնգետասան աւուրց աշխատութեան իւրոյ ընդ այնպիսի արգեանց, զոր ընդ ամս երկուս իւրովք աշխատութեամբ հազիւ ունէր հայթայթել, եթէ Սեփհականութիւն չէր ՚ի միջի :

Զկարեւորագոյն զայսոսիկ ապացոյցս իմաստասիրէ քաղաքականն գիտութիւն ՚ի

զօրավիգն սկզբանց Սեփհականութեան . ապացոյցք որ որչափ ճշմարիտք են՝ նոյն չափ և առաւել ևս ակներեւք, անժխտելիք և հիմնեալք ՚ի վերայ մեծամեծ սկզբանց հայթայթելոյ զպէտս միջնորդաւ աշխատութեան և փոխանակութեան արգեանց :

Սղութիւն ժամուս չնորհեալ համբակիս անձեռնհաս առնէ զիս ՚ի զլուկս հանել զնառս, և ցուցանել զմեծամեծ օգուտս որ ըստ բարոյական և ըստ քաղաքական տեսութեան յառաջ զան՚ի Սեփհականութենէ :

Վասն որոյ ներումն խնդրեմ, Աստուածապատիւ Դիտապետք, մեծապատիւ Հարք և ներողամիտ Տեարք, որք անարդամեծար առաջիկայութեամբ ձերով զուարիք գործէք զշանդէս մեր, եթէ ոչ ըստ նիւթիոյ կարեւորութեան կարացի խօսել: Ներողամտութիւն ձեր բարեխօսեացէ վասն իմ, և երկչուտութիւն անփորձ հասակիս, որ գեռ ևս գեղեւէն յընթացս գիտութեանս քաղաքավայելուչ մարդկութեան :

Դ 10 Սեպտեմբերի 1863:

ՍՏԵՓԱՆ ԵԱԶԸՆՅԵԱՆ

ՑՐԱԳԻՉՈՒԵՑԻ

Աշակերտ Ռապի . Վարժարանին

## ԳԻՒՂՆ ԱՐԾԱԹԻ ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Քաղցր ՚ի միտս իմ յածին միշտ յիշատակք աւուրցն յորս շրջեցայ պանդխտութեամբ ՚ի գիւղաբնակ վայրս : Զառաւոտն այն յիշեմ, յորում վաղայարոյց ելի ՚ի ճանապարհ ընդ ազգականացն իմոց, դեռչե էր ծագեալ արեգական, մինչ մեկնեցաք ՚ի կարնոյ կառաձեւ սայլօք գնալ յուխտ ՚ի խաչավանս : Զովագին էր օդն, և ըստ յառաջել մեր ՚ի լայնատարր գաշտին ընդ արեւմուտս, յետ սակաւ միոյ բարձրանային ՚ի կողից առապար լերանցն կարմրագոյն ճառագայթք արփւոյն՝ որով ներկանէին որպէս զոսկի փայլուն շուրջանակի կատարք լերանց, որք ընդ արեւմուակողմն քաղաքին : Յետ ժամու միոյ անցանելոյ՝ ժամանեցաք ՚ի չէնն կան կոչեցեալ, բազմաբնակ քան զամենայն գիւղօրէս, և փարթամ և ճոխ երկիր : Անդ իր երիս ժամս հանգիստ առեալ վերստին անկաք ՚ի ճանապարհ ներմութիւն արեգականն տագնա-

պեցուցանէր զեղինսն, որք քրտնախոնիք ակամայ ձգէին զսայլն ծանրաբեռնեալ : Ուր ուրեմն երեւեցաւ բարձրագիր գիւղն Արծաթի : Եւ ըստ մերձենալ մեր՝ բազմանային անցաւորք կառօք և սայլիք բեռնաւորելովք : Գրեաթէ զտիւն ողջոյն ճանապարհորդեալք՝ ընդ երկայնել երեկոյին ստուերաց հասաք յԱրծաթի :

Ի լայնածաւալ գաշտին կարնոյ յարեւմտակողմն ՚ի դարեւանդ բլրոյ միոյ, կառուցեալ կայ գիւղս Արծաթի կամ Արծըթի, յանդիման Շամբին կարնոյ մերձ առվտականն Եփրատայ, որ երագասահ գնացիքն անցանէ անտի ուռուցեալ, գողցես հերձուլ կամելով զեղերս իւր : Կայ անդանօր քառակամար կամուրջ քարաշէն ամրագոյն՝ ուստի անցանեն սայլք բեռնաւորեալք շինականաց ամենենին անխափան : Ի յորդել անձրեւաց բարձրանայ ջուրն ցկէս կամբջին և զեղեալ ծաւակ